№ 149 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 11 1900 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 11 № 149

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ОТЪ КОНТОРЫ ГАЗЕТЫ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"

Изданіе газеты „НОВОЕ ОБОЗРѢНІЕ" будетъ возобновлено

Съ 18-го августа настоящаго года.

Подписчики прошлаго года, не пожелавшіе взять обратно оставшіяся за конторой деньги, будутъ получать газету безъ доплаты съ 18-го августа по 1-е октября. Тѣ изъ нихъ, которые пожелаютъ получать газету и затѣмъ, съ 1-го октября по 1-е января 1901 г., доплачиваютъ 2 руб. 50 коп. Новые же подписчики за время съ 18-го августа по 1-е января 1901 года платятъ 3 руб. 50 коп.

Подписчики прошлаго года, въ случаѣ перемѣны адреса за время до 18-го августа, сообщаютъ о томъ заблаговременно въ контору «Нов. Об.», причемъ особой доплаты за перемѣну адреса не вносятъ.

Для пріема подписки и объявленій

контора (Барятинская, д. кн. Гумановыхъ) открыта по вторникамъ и пятницамъ, отъ 6 до 7 час. вечера. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արեւելքի ուսումնասիրութիւնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենագրութիւն. Նամակ Անիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. -- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բագուի հայոց Մարդասիրական ընկերութիւնը. Ողջոյն հայրենիքին.

ԱՐԵՒԵԼՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Մենք հաղորդեցինք, որ դիտաւորութիւն կայ Ռնդրկովկասի մի քանի քաղաքներում բանալ Արեւելքի ուսումնասիրութեան ընկերութիւններ: Առաջիկայ աշնան կը բացվի Թիֆլիսում մի այդպիսի ընկերութիւն, որին կը հետեւեն և միւսները: Այդ ընկերութիւնները իսկապէս պէտք է համարվեն ճիւղեր այն կենտրոնական մեծ ընկերութեան, որ հիմնվեց երեք ամիս առաջ Պետերբուրգում:

Արեւելքի ուսումնասիրութեան այդ ընկերութիւնները նպատակ են դրել իրանց համար՝ մի կողմից ուսումնասիրել արեւելեան երկիրների, օրինակ Պարսկաստանի, Թուրքիայի, Հնդկաստանի, Չինաստանի կենցաղավարական և տնտեսական պայմանները, իսկ միւս կողմից նպաստել, որ այդ երկիրները հաստատեն առեւտրական և արդիւնագործական սերտ յարաբերութիւններ Ռուսաստանի հետ: Այդ ընկերութիւնները այդպիսով աւելի գործնական նպատակներ ունեն իրանց առաջ, քան տեսական և զուտ գիտնական:

Ինչպէս յայտնի է, Արեւելքի ուսումնասիրութեանը մի ամբողջ գիտութիւն է նուիրված, արեւելագիտութիւն անունով, որ գլխաւորապէս զբաղված է պատմական, լեզուաբանական, հնագիտական և ազգագրական հետազօտութիւններով: Արեւելագէտը կամ օրիէնտալիստը ունի իր առաջ ուսումնասիրութեան ընդարձակ ծրագիր, բայց նա դիտմամբ իրան սահմանափակում է, հեռու պահելով իրան առեւտրական և մերկանտիլ գործերից, և եթէ զբաղված է այդպիսի խնդիրներով՝ առաւելապէս այն նպատակով, որպէս զի նոր լոյս սփռէ ուսումնասիրած նիւթի վրա և նպաստէ նրա լիակատար մշակութեան:

Գիտնական այդ գործը տուել է նշանաւոր հետեւանքներ և պէտք է դեռ շատ գաղտնիքներ բանայ ազգերի թէ անցեալ և թէ ներկայ կեանքից: Դա ուսումնասիրութեան մի ընդարձակ ասպարէզ է՝ շատ հետաքրքիր և գիտնական լուրջ մշակութեան կարօտ: Իսկ այն նպատակները, որ դրել են մեզ մօտ բացվող ընկերութիւնները, աւելի ժամանակակից, աւելի գործնական, աւելի մատչելի բնաւորութիւն ունեն: Այնտեղ կարեւոր է գիտնական հետաքրքրութիւնը, այստեղ գործնական հետաքրքրութիւնը: Այնտեղ ընդարձակվում է իրերի ուսումնասիրութիւնը և նրանց յարաբերութեան էութիւնը, այստեղ առաջ են գալիս երկիրների միմեանց հետ գործնական շփումներ առաջացնելու, արդիւնքների փոխանակութիւնը մեծացնելու, կանոնաւոր հաղորդակցութիւն և մի շարք տնտեսական և հասարակական յարաբերութիւններ հաստատելու խնդիրները:

ՆՊԷՏ Արեւելքի ուսումնասիրութեան ընկերութիւնները սկսեն լուրջ կերպով գործել, կարող են էական օգուտներ տալ մեր երկրին, ընդարձակելով նրա արդիւնագործական շփումը Հարեւան Պարսկաստանի և Թուրքիայի հետ, և նրանց մէջ հաստատելով կանոնաւոր տնտեսական յարաբերութիւններ, որոնք այժմ բացակայ են կամ յամենայն դէպս շատ թոյլ են:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Գերեզմանն է, դժբաղդաբար, մեծ կորուստների գնահատողը: Մինչեւ այսօր էլ ռուսաց մամուլը վերին աստիճանի ոգեւորված յօդուածներով շարունակում է իր յարգանքը մատուցանել Գրիգոր Զանչեանի յիշատակին: Մի այդպիսի յօդուած էլ տպված է «С. Петер. Вѣд.» լրագրի մէջ: Ահա ինչ է ասում յօդուածագիրը, որ, ինչպէս երեւում է, ապրում է Թիֆլիսում:

Գրիգոր Զանչեանի անժամանակ մահվան տխուր լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Թիֆլիսում: Այս այնքան զգալի եւ անփոխարինելի կորուստը տեղային ինտելիգենցիայի վրա անկարագրելի ծանր տպաւորութիւն թողեց: Զը կայ ճշմարտութեան եւ արդարութեան անխոնջ զինուորը, չը կայ շնորհալի գրական գործիչը, չը կայ զրկված սրտերի ոգեշունչ երգիչը: Այստեղ երկար չը խօսենք այս իսկապէս մեծատաղանդ մարդու գրական գործունէութեան մասին, այլ ընդհանուր գծերով մի քանի խօսք ասենք նրա մասին: Երբ ամբողջ Թիւրքայ Հայաստանը, Թիւրքական բարբարոսութեան չնորհիւ, դարձաւ մի մարդկային սպանդանոց, երբ հայոց դաշտերով հոսում էին քրիստոնէական արեան վտակները, երբ հայոց եկեղեցիները սրբապղծութեամբ ոտնակոխ էին անում քրդերը, երբ ջահել հայուհին նուաղած էր անօրէն քրդի գրկում, հէնց այդ ժամանակ լավեց Գրիգոր Զանչեանի հեղինակաւոր ձայնը: Այդ միջոցին Եւրոպան չէր գործում, անխօս դիտում էր, թէ ինչպէս Փանատիկոս Թիւրքերը ծաղրի էին ենթարկում հայ ժողովրդի սրբութիւն սրբոցը, աշխատելով ջնջել նրան աշխարհի երեսից: Մի շարք յօդուածներով եւ հրատարակութիւններով («Армянскій вопросъ въ Турціи», «Положеніе армянъ въ Турціи»), որոնք տոգորված են քրիստոնէական վեհ ցաւակցութեամբ, որոնցից ճշմարտութեան եւ արդարութեան չունչ է փչում, Գրիգոր Զանչեան մերկացրեց Բ. Դրան ամբողջ զզուելի քաղաքականութիւնը, պարզեց ռուս հասարակութեան առաջ հայերի իսկական կացութիւնը Թիւրքիայում եւ այդպիսով ռուս ինտելիգենցիայի խելացի մասի մէջ առաջացրեց կարեկցութիւն դէպի Թիւրքական ֆանատիկոսութեան զոհերը, ուշադրութիւն դէպի բազմաչարչար հայերի վիճակը, որոնց ընդունված է համարել տարդկային ընտանիքի խորթ զաւակներ: Նա առաջինն էր, որ օգնութեան ձեռք մեկնեց անօգնական հայ որբերին, որոնք կոտորածից յետոյ մնացին անտուն, առանց մի կտոր հացի:

Պատմելով «Եղբայրական օգնութիւն» ժողովածուի միջոցով կատարած գործերը, յօդուածագիրը չէ մոռանում յիշատակել եւ այն հանգամանքը, որ Զանչեան միայն իր ազգակիցների համար չէր այդքան եռանդուն կարեկից. նա, պատկանելով հայ ազգութեան, ամենից առաջ մարդ էր եւ մարդկային ոչ մի բան իր համար խորթ չէր համարում: Իր գեղեցիկ յօդուածը պ. Կ. վերջացնում է հետեւեալ խօսքերով.

Գրիգոր Զանչեան իր տաղանդաւոր գրչով կանգնեց իր համար յաւիտենական, անխորտակելի արձան հարիւր հազարաւոր սիրող սրտերից: Նա չէ մեռել, նա կենդանի է: Նրա մահն իսկական անմահութիւն է:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Максимъ Горькій. Разсказы. Томъ II. С.-Петербургъ 1900 г. 394 стр. ц. 1 р.

Գօրկիյի գրուածքները, նոր հրատարակութեան մէջ, տպված են ժամանակագրական կարգով, որ հնարաւորութիւն է տալիս հետաքրքիր և գիտնական լուրջ մշակութեան կարօտ: Իսկ այն նպատակները, որ դրել են մեզ մօտ բացվող ընկերութիւնները, աւելի ժամանակակից, աւելի գործնական, աւելի մատչելի բնաւորութիւն ունեն: Այնտեղ կարեւոր է գիտնական հետաքրքրութիւնը, այստեղ գործնական հետաքրքրութիւնը: Այնտեղ ընդարձակվում է իրերի ուսումնասիրութիւնը և նրանց յարաբերութեան էութիւնը, այստեղ առաջ են գալիս երկիրների միմեանց հետ գործնական շփումներ առաջացնելու, արդիւնքների փոխանակութիւնը մեծացնելու, կանոնաւոր հաղորդակցութիւն և մի շարք տնտեսական և հասարակական յարաբերութիւններ հաստատելու խնդիրները:

ՆՊԷՏ Արեւելքի ուսումնասիրութեան ընկերութիւնները սկսեն լուրջ կերպով գործել, կարող են էական օգուտներ տալ մեր երկրին, ընդարձակելով նրա արդիւնագործական շփումը Հարեւան Պարսկաստանի և Թուրքիայի հետ, և նրանց մէջ հաստատելով կանոնաւոր տնտեսական յարաբերութիւններ, որոնք այժմ բացակայ են կամ յամենայն դէպս շատ թոյլ են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Նոր կանոնադրութեան համաձայն՝ Բագուի Մարդասիրական Ընկերութեան գործունէութիւնը, ինչպէս յայտնի է, սահմանափակվում է Բագու քաղաքի շրջանով միայն: Գործունէութեան աշխարհագրական ասպարէզը յիրաւի թէեւ սահմանափակվել է, ընկերութեան ցոյց տուած «մարդասիրութիւնը» թէեւ Բագու քաղաքից դուրս այլ եւս չէ անցնում, սակայն այդ գործունէութեան առաջ հրապարակ է հանված ներքին մի այլ ասպարէզ, որ աւելի քան եռանդ, ջանք եւ նիւթական միջոցներ է պահանջում:

Բագուն խոշոր արդիւնաբերական կենտրոնատեղի է. նա միլիօնների վայր է, կապիտալի հայրենիք: Այդտեղ անդադար կուտակվում է հարստութիւնը, աճում, բազմապատկվում է կապիտալը, ծայրայեղութեան հասնում: Արիւնքրտինքի շաղախով փարթամացած այդ ծայրայեղութիւնը—ինչպէս եւ ամեն ժամանակ եւ ամեն տեղ—իր հետ անբաժան քարշ է տալիս եւ մի այլ սոսկալի ծայրայեղութիւն՝ թշուառութեան, տանջանքի, կարօտութեան ծայրայեղութիւն...

Մարդկային հասարակութեան համար ճակատագրական դարձած այս օրէնքը յատուկ է ամեն մի ժամանակի, երբ «աշխատանքի» եւ «կապիտալի» ներկայացուցիչները թշնամական յարաբերութիւնների մէջ են դրված լինում, երբ հանդէս են գալիս՝ մէկը տիրապետող, անկախ, միւսը՝ ստորադրեալ եւ ամբողջ գոյութեամբ կախված դրութեան մէջ: Այդ դրութիւնը սկսել է չոչափելի դառնալ եւ Բագուի շրջանում: Տարեցտարի լցվում է Բագուն եկուորներով: Գալիս—տեղաւորվում են եւ ապա փոխադրում իրանց ընտանիքը. այսպիսով տեղի է ունենում շարունակ գաղթականութեան մի հոսանք, որ քանի գնում, աւելի եւ աւելի ընդարձակ ծաւալ է ստանում:

Գաւառներում պարտէզներով շրջապատված ընդարձակ ընակարանների սովոր այդ ընտանիքները, փոխադրվելով Բագու, հարկադրված են լինում կուչ գալ, սեղմվել նաւթահանքերում կամ գործարաններում յատկացրած մէկ կամ երկու գարշահոտ սենեակներում եւ միակ աշխատաւորի ձեռքին նայել, նրա օրավարձի, ամսականի յոյսով ապրել:

Մէկը այն հնչին դէպքերից, այն սովորական պատահարներից, որոնցով այնքան հարուստ է նաւթարդիւնաբերական կեանքը—եւ ահա միակ աշխատաւորը մատնված է վտանգի: Նա կամ ոտն է կորցնում, կամ ձեռքից զրկվում եւ կամ վայր ընկնում—գլուխը ջախջախում: Զը կայ այլ եւս ընտանիքի աշխատաւորը: Ո՞վ պիտի փոխարինէ նրան. ո՞վ պիտի խնամէ, կերակրէ նրա որբացած մանուկներին: Աղմկալի կեանքը շարունակում է իր պտոյտը. նրա հոգը չէ, թէ մի ընտանիքի անդադարուն հանգաւ, մի ամբողջ ընտանիք թշուառութեան գիրկը նետվեց...

Եւ քանի-քանի օրինակներ, թշուառութեան ինչ սոսկալի տեսարաններ աքօղված են մնում եսամոլութեան մատնված հասարակութեան աչքից:

Ո՞վ պէտք է հետաքրքրվի, աքօղված թշուառութիւնը ո՞վ պիտի երեւան հանէ եւ հոգ տանէ, եթէ ոչ իսկական «մարդասիրութիւնը»...

Մարդասիրական ընկերութիւնը իր խորհրդարանում ընդունում է ամեն օր դրաւոր եւ բանաւոր խնդիրներ, որոնք արձանագրվում են առանձին մատեանի մէջ: Համաձայն տրված խնդիրների՝ ընկերութեան վարչութիւնը իր հերթապահ անդամների ձեռքով խնդրատուների վերաբերեալ տեղեկութիւններ է ժողովում, տեղն ու տեղը ստուգում նրանց դրութիւնը, վերահասու լինում նրանց նիստ ու կացին եւ ապա այդ ժողոված եւ վերաստուգած տեղեկութիւնների հիման վրա՝ որոշումներ կայացնում: Սրտաճմլիկ են այդ տեղեկութիւնները:

Առանց լուսամուտների, խոնաւ մի նկուղում ընկած է հիւանդ սայլապանը. նա սայլից վայր է ընկել եւ ազդրը փշրել: Գործ դրած միջոցները ոչ միայն չեն օգնել, այլ եւ գրգռել, սաստկացրել, բորբոքել են. այլ եւս յոյս չէ մնացել բժշկելու, պէտք է ոտը կտրել. իսկ հիւանդը չէ համաձայնում: Անխնամ թողնելուց վնասունքները փտել են սկսել... Կմախք դարձած կինը՝ մի կողմ քաշված՝ սեւ օրն է ողբում, իսկ 4—5 երեխաներ՝ ցնցոտիներով պատած՝ մահամերձի շուրջն են վխտում... Եկամուտի ոչ մի աղբիւր, ոչ մի օժանդակող ձեռք:

Նաւթահանքում կեանքը մաշած վարձկանը հարուածի է ենթարկվել, փորը վնասվել է. նա այլ եւս չէ կարողանում աշխատել, զրկվել է նաեւ «տղամարդութիւնից»: Նաւթահանքատէրը իր հաշւով առողջացրել է եւ բաց թողել, որովհետեւ այդ «բազմամեայ» վարձկանը այլ եւս չէ կարողանում ծանր աշխատանք կատարել, իր նախկին պաշտօնը վարել: Համարեա անպէտքացած եւ հրապարակից դուրս չպրտված մարդը, մի անօգնական ընտանիքի պետը, չը գիտէ ինչ անէ, ինչով իր ընտանիքը պահէ: Դիմել է մի քանի անգամ նաւթահանքատիրոջ, կարեկցութիւն հայցել, բայց ի զուր: Միլիօնների գոլորշուց չչված կօմերսանտը ոչ միայն ընդունակ չէ գտնվել կարեկցելու, այլ եւ ունկընդիր լինելու բարեհաճութիւն չէ ցոյց տուել...

Ցուսահատութիւնից ապուշ դարձած՝ կապիտալի այդ զոհը այժմ իր վիշտը ուղղել է «Մարդասիրական ընկերութեան» եւ աջակցութիւն, օգնութիւն, կարեկցութիւն է խնդրում:

Թուրք տանտէրը տան քրէն է պահանջում. նա ժամանակ առ ժամանակ տուն է ընկնում, պահանջներ է անում եւ անվայել բաներ թոյլ տալիս իրան: Երիտասարդ այրին հարկադրված է տանել այդ անպատիւ արարքները, լռել, յաճախ նոյն իսկ «պատուի գնով» վճարել...

Գիւղացի մէկը տարիներով գործի է կանգնել, աշխատել է, բայց փող չէ ստացել, հաւա-

դիտելու հեղինակի տաղանդի եւ աշխարհայեացքի աստիճանական զարգացումը։

Այդ հրատարակութեան երկրորդ հատորում, որի մէջ զետեղված են 1896 եւ 1897 թուերին գրած պատմածքները, պարզ նկատվում է աւելի այրացած, հասունացած տաղանդ, աւելի պարզ ոճ եւ աւելի քիչ յափշտակութիւն նիցչէականութեամբ։

Առաջին հատորում, որի մասին մենք առիթ ունեցանք խօսելու «Մշակի» 101 համարում, կան չատ ուժեղ, խորագէս գեղարուեստական տեսարաններ, վարպետ ձեռքով ուրուագծված կենդանագիրներ, բայց տիպեր, որոնք դրոշմվէին ընթերցողի մտքում, չը կան։ Երկրորդ հատորը արդէն տալիս է մեզ երկու վերին աստիճանի ըէլիէֆ կերպով վերարտադրված տիպեր (Կօնօվալով եւ Վարենկա Օլեսովա), որոնք խոշոր տաղանդի վկայական կարող են համարվել հեղինակի համար։

Սակայն այդ հատորումն էլ դեռ Գօրկիյ չէ տալիս գաղափարի կողմից ամբողջացած եւ գեղարուեստօրէն կենտրօնացած մի գրուածք։ Նրա տաղանդը այդտեղ էլ դեռ չէ գտել անհրաժեշտ չափը, հաւասարակշռութիւնը։

Ինչ վերաբերում է աշխարհայեացքին, ընդհանուր գծերով, նա այդ հատորում նոյնն է մնացել, ինչ որ առաջին հատորումն էր։ Այդտեղ էլ Գօրկիյ չարունակում է մնալ ոգեւորված քարոզիչ եւ ջատագով ազատ, ինքնագլուխ անհատականութեան, զօրեղ զգացմունքների, հատատ բնաւորութիւնների, «սրտում անհանգստութեամբ ծնվածների», բայց այժմ նրա մէջ աւելի քիչ է երեւում այդ կողմից ծայրայեղութիւն կամ աֆֆեկտացիա, թէեւ այնու ամենայնիւ երեւում է։

Վերցնենք, օրինակ, «Ханъ и его сынъ» թուրքական առասպելը (ի դէպ ասել՝ Գօրկիյին չեն աջողվում առասպելները եւ այլաբանութիւնները)։

Կրիմի Մօսօլայմա էլ Ասվաբ խանը ծեր է։ Նա ունի չատ կանայք իր հարէմում, բայց նրանցից սիրում է միայն կազաչկա գերուհուն։ Խանի որդին Տօլայկ Ալհալան վերադառնում է յաղթական արշաւանքից։ Տօնախմբութիւն են կազմում ի պատիւ հերոսի. ի միջի այլոց, նեռով նշան են խփում գերիների աչքերին։ Ծերունի խանը ուզում է վարձատրել որդուն։ Ինչ որ ուզես, կը տամ,—ասում է նա։ Որդին կազաչկային է խնդրում... Հայր եւ որդի չեն կարող ապրել առանց նրան եւ չեն կարող զիջել նրան միմեանց։ Նրանք վճռում են ծովը գցել գերուհուն։ Գնանք,—ասում են նրանք նրան։—«Գալիս եմ,—ասաց նա։—Գալիս եմ։ Ոչ մէկին, ոչ միւսին—այդպէս էք վճռել։ Այդպէս էլ պէտք է վճռեն զօրեղ սրտի տէր մարդիկ։ Գալիս եմ։» Ծեր խանը ինքն էլ նետվում է ծովը նրա ետեւից, իսկ որդին երկար նայում է ներքեւ եւ յետոյ բարձր ձայնով ասում,—«Ինձ էլ այդպիսի հաստատուն սիրտ տուր, Ալլահ»։

Հետեւեալ «Выводъ» պատկերում, որի թարգմանութիւնը տվվեց «Մշակում» (№ 134), հեղինակը մարդկային անգթութիւնը խարատացել է իր տիրոջ եւ առանց որ եւ է գրաւոր վաւերագրի՝ իր արդար վաստակը նրա բարեհոգութեան է թողել։ Այժմ խեղճ գիւղացին տուն է կամենում վերադառնալ, իսկ տէրը այդ չէ կամենում, որովհետեւ այդ նրա շահի տեսակէտից ձեռնտու չէ։ Ուժով չէ կարողանում ստանալ, գանգատով՝ նոյնպէս, որովհետեւ չը վճարելու մասին ոչ մի վկայութիւն չը կայ։ Անհրաժեշտ է հեղինակաւոր միջնորդութիւն. եւ ինչ միջնորդութիւն աւելի մատչելի, աւելի հեղինակաւոր դեր պիտի խաղայ, քան թէ «Մարդասիրական ընկերութեան» միջնորդութիւնը։

Եւ այն եւ այն եւ այն։

Խնդիրներ, աղաչանքներ, որքան եւ ինչ տեսակի կուզէք։ Որքան հետաքրքրվում էք, որքան ունկնդիր էք լինում, տրամադրութիւն էք ցոյց տալիս կարեկցելու, աջակցելու, այնքան աւելի եւ աւելի կարեկցութեան արժանի տեսարաններ են հանդէս գալիս, օգնութեան, նպաստի անհրաժեշտութիւն է ներկայանում։

Եւ «Մարդասիրական ընկերութիւնը», յանձին իր վարչութեան, ձգտում է իր կոչման արժանավայել դիրք բռնած լինել։ Նա տալիս է նիւթական թէ միանուագ եւ թէ ամսական նպաստներ, բնակարանների վարձ, հանդերձեղէններ, ճանապարհածախս՝ հայրենիք վերադառնալու, ճաշ, գործի ընդունակներին՝ գործ, գործ ձեռնարկողներին՝ նիւթական միջոց, հիւանդներին՝ դեղեր եւ, ըստ պահանջման, միջոց հիւանդանոց մտնելու եւ այլն։ Օգնութեան այս եղանակը, ի հարկէ, կատարեալ չէ. ունի իր զգալի պակասութիւնները. այդ շօշափելի է արդէն. եւ հէնց այդ պատճառով ընկերութեան վարչութիւնը զուգընթացաբար հոգ է տանում օգնութեան այդ գործը աւելի խելացի հիմունքների վրա դնելու, կանոնաւոր ձեռնարկութիւնների վերածելու։ Նա արդէն ունի ձրի ճաշարան, որ սկսել է գործել անցած ապրիլի 20-ից։ Ճաշարանը գտնվում է մի խումբ կանանց անմիջական հսկողութեան տակ, որ վարչութեան աջակից է հանդիսանում, ղեկավարելով ամբողջ գործը։ Ճաշարանը, բացի դրանից, ունի իր յատուկ վերակացուհին։ Ճաշարանում ամենայն օր ճաշում են 100—110 հոգի, որի 70%, կազմում են երեխաներ, աղջիկ ու տղայ—2 տարեկանից սկսած մինչեւ 12 տարեկան։ Ապրիլի 20-ից մինչեւ յունիսի 1-ը—ասել է թէ մի ամիս եւ տասս օրվայ ընթացքում—ճաշարանից օգտվել են 4092 հոգի։ Պատրաստվել է ուտիվայ եւ պատվայ ճաշ։ Ամեն մի ճաշ միջին թուով նստել է 9—10 կոպէկ։ Ճաշարանը պիտի ընդարձակվի եւ ունենայ իր բաժանմունքները քաղաքի զանազան մասերում։

Ղեկավարող կանանց խումբը մտադիր է ճաշարանից օգտվող երեխաներին—որոնք գըլխաւորապէս կազմում են տեղիս աղքատանոցում պատսպարվողների երեխաները—սովորեցնել տալ որ եւ է արհեստ՝ օգնութիւնը, բարեգործութիւնը կատարեալ դարձնելու համար։ Բացի սրանից Մարդասիրական ընկերութիւնը քաղաքից վերցրած ունի երկու ընդարձակ հողաբաժին՝ էժանագին եւ ձրի բնակարաններ չինել տալու համար։ Առ այժմ պատրաստել է տուած 40—45 մէկ եւ երկու սենեակներից բաղկացած բնակարանների մարգակ, որոնք պիտի կառուցվեն այդ հողաբաժիններից մէկ մասի վրա։ Ամբողջ շինութիւնը կը կառուցվի հանգուցեալ Գրիգոր Թումանեանի յիշատակին, որի ժառանգները նուիրել են 30,000 ռուբլի։

Թէ այս եւ թէ առհասարակ ամեն մի հասարակական գործունէութեան, լինի նա նեղ թէ ընդարձակ ծաւալով, ինչպէս է վերաբերվում տեղիս ինտելիգէնտների որոշ մասը, ինչ հայեացք է արտայայտում եւ իր եղկելի անպէտքութիւնը որպիսի պատճառաբանութիւններով է ուզում քօղարկել—այդ մասին մի ուրիշ անգամ։

Ն. Դաւթեան

ՈՂՋՈՑՆ ՀԱՑՐԵՆԻՔԻՆ

Աւրձակ բանաստեղծութիւն

(Թուսերէնից)

—

Տար, սիրելիս, տար ինձանից ողջոյն իմ հայրենիքին։

Ազատ, ինչպէս թռչունը, դու, գուշակելով մօտալուտ ձմեռը, թռչում ես դէպի հարաւ։ Ես յիշում եմ կռունկների երկար երամը, երբ երկնքի երեսով լողալով գնում էր իր առաջնորդի ետեւից, իսկ ես կանգնած ագահութեամբ դիտում էի նրա ուղին։ Ցանկարծ մի կռունկ դուրս եկաւ շարքից, յետ մնաց... Թռչողների եւ նրա մէջ եղած տարածութիւնը մուրեան երկրի ազգաբնակութեան եւ զօրքի շնորհաւորութիւնները։ Բաղդաւոր եմ, որ կարող եմ վկայել, թէ մեզ առաքված փորձութեան օրերում զօրքերը եւ ազգաբնակութիւնը արժանաւոր հանդիսացան ռուս մեծ անուանը»։ Այդ հեռագրի վրա, որ զինուորական մինիստրը ամենահպատակօրէն զեկուցեց Թագաւոր Կայսրին, Նորին Մեծութիւնը բարեհաճեց մակագրել—«Անկեղծ շնորհակալ եմ զօրքերից՝ նրանց քաջարի գործունէութիւնների համար»։

—

Պրոֆէսօրների եւ ուսանողների յարաբերութիւնները աւելի սերտ եւ մտերիմ դարձնելու հարցը ներկայումս զբաղեցրել է հերթական Պետերբուրգի զինուորական-բժշկական ակադեմիայում։ Այդ հարցի քննութիւնը պէտք է պարզի, թէ ինչ եղանակով կարելի է բարձրացնել դասաւանդութիւնը եւ ուժեղացնել ուսանողների գործնական պարապմունքները։

—

Օդէսայում սկսվել է վերջին խառնակութիւնների ժամանակ ձերբակալված խռովարարների դատը։ Մինչեւ այժմ դատված մեղադրեալները՝ բոլորն էլ դատապարտված են վեց ամսվայ բանտարկութեան։

—

Ինչպէս յայտնի է, չինական պատերազմի պատճառով արգելվեց Ռուսաստանի ներքին նահանգներից գաղթականներին դէպի Սիբիր փոխադրելը, որովհետեւ հաղորդակցութեան ճանապարհները ծառայում էին զօրքերի եւ պատերազմական մթերքների փոխադրութեան համար։ Գաղթականների ամբողջ խմբեր այդպիսով մնացին ճանապարհին եւ հանգստութեան կայարաններում։ Լրագիրների ասելով, չատ մարդկանց մի տեղում խնվելու եւ բժշկական օգնութեան բացակայութեան շնորհիւ, գաղթականների շրջանում յայտնվել են վարակիչ հիւանդութիւններ։

—

«Правит. Вѣстникъ» լրագրում տված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին, որով յայտնվում է, որ այսուհետեւ միջնակարգ դպրոցների աշակերտներին այլ եւս չը պէտք է տրվեն աշխատանքներ ամառվայ արձակուրդի ընթացքում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ծպտեալ կերպով Կրիմ է եկել Եգիպտոսի խէդիվ Աբբաս-փաշան։

—

Ներկայ տարվայ սեպտեմբերի 1-ից սկսած՝ պետական բանկի եւ նրա բաժանմունքների միջոցով ուղարկվող գումարները, ֆինանսների մինիստրի կարգադրութեան համաձայն, կենթարկվեն վճարման նոր սակագների։ Այսպէս 500 ռուբլուց պակաս գումարներից կառնվեն 40-ական կոպէկ, հազար ռուբլուց աւելի գումարներից 25-ական կոպէկ իւրաքանչիւր հազարից եւ այլն։ Հեռագրով փոխանակագրեր անելու համար եւս, բացի հեռագրի վճարից,

---

ունի մի ողորմելի ձիու բերանով, բայց այդտեղ նա օբիեկտիվ է մնում եւ նոյն իսկ ուզում է յարգանք ներշնչել դէպի «հաստատուն սիրտը» այնպիսի հրէշների, որոնք նշան են խփում մարդկանց աչքերին եւ ծովը են գցում մի խեղճ կնոջ, որովհետեւ նա անբաղդութիւն է ունեցել երկուսին էլ դուր գալու։

Այդ առաջանում է անսանձ, անկօնտրոլ զգացմունքի ծայրայեղ պաշտամունքից։

Նոյն պատճառովն են բացատրվում եւ այդ հատորի ամենատաղանդաւոր վէպիկի, «Վարենկա Օլեսովայի», տարօրինակ մի միջնադէսքը (Օլեսովայի թռուցիկ սիրահարումը ծեծված, ջարդված, արիւնլուայ՝ ձիու դող Բեմեզովի վրա) եւ հակագեղարուեստական, գռեհկական վերջաւորութիւնը։

Սակայն, եթէ չը հաշուենք այդ բացառութիւնները, ամբողջ երկրորդ հատորը անկասկած ապացուցանում է, որ հեղինակի՝ ընդհանուր առմամբ՝ համակրելի աշխարհայեացքը գնալով աւելի եւս համակրելի, աւելի մարդկայնական է դառնում։

Այդ երեւում է եւ արտաքին կողմից։ Մինչդեռ զանազան «սիգմաններ» անագին տեղ էին բռնում առաջին հատորում, այստեղ, երկրորդ հատորում, նրանց չէ նուիրված ոչ մի տող։ Դրա փոխարէն, այստեղ աւելի եւս տեղ է տրված «босякъ»-ներին (անանկ) որոնք «ինտէլիգէնտներ են քաղցածները ու մերկերի մէջ», եւ «երիտասարդ գիւղին» (молодая деревня), որ ծնունդ է առել բէֆօրմներից յետոյ։

Տ. Ց.

—

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Քահանայական խնդիր», համառօտ ակնարկ. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան. Մոսկվա 1900 թ., 219 երես. գ. 1 ր. 2) «Տեղեկագիր և հաշուեկշիռ 1899—1900 տարեշրջանի Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան», Թաւրէժ 1900, 18 երես. 3) Համառօտ տեղեկագիր հոգաբարձութեանս եռամեայ գործունէութեան Երեւանայ հայոց թեմական դպրոցի ուսումնական և տնտեսական վիճակի մասին՝ սկսած 1897—1900 ուս. ամի», գանձապահ հոգաբարձու Գ. Անտոնեանց. 4) В. Вартанянцъ. „Ученіе Л. Н. Толстого, какъ идеализація рабства.“ (Критическій Этюдъ). Тифлисъ 1900, 56 стр. ц. 35 к; 5) „Спеціальныя засѣданія Императорскаго Кавказскаго Сельскаго Хозяйства по табаководству“, 87 стр., 6) „Отчетъ Государственныхъ Сберегательныхъ кассъ за 1898 годъ“; 7) „Готтентотскій или маврскій клопъ и мѣры борьбы съ нимъ“, 9 стр.

ՆԱՄԱԿ ԱՆԻԻՑ

—

Օգոստոսի 1-ին

Այսօր մի խումբ ախալքալաքցի երիտասարդներ՝ ուսուցիչներ եւ ուսանողներ՝ Կաթողիկէ Մայր եկեղեցում հոգեհանդիսատ կատարեցին հանգուցեալ Գրիգոր Ջանչեանի յիշատակին։

Սրտաշարժ էր կիսաւեր եկեղեցու մերկ պատերի մէջ Միքայէլ վարդապետի կատարած անշուք աղօթքը՝ աղգիս եւ մարդկութեան թանգագին զաւակի պայծառ հոգու համար։

Միքայէլ վարդապետը լաւ հոգս է տանում մնացած աւերակների պահպանութեան մասին։

տարեկան երկրի ազգաբնակութեան եւ զօրքի շնորհաւորութիւնները։ Բաղդաւոր եմ, որ կարող եմ վկայել, թէ մեզ առաքված փորձութեան օրերում զօրքերը եւ ազգաբնակութիւնը արժանաւոր հանդիսացան ռուս մեծ անուանը»։ Այդ հեռագրի վրա, որ զինուորական մինիստրը ամենահպատակօրէն զեկուցեց Թագաւոր Կայսրին, Նորին Մեծութիւնը բարեհաճեց մակագրել—«Անկեղծ շնորհակալ եմ զօրքերից՝ նրանց քաջարի գործունէութիւնների համար»։

—

Պրոֆէսօրների եւ ուսանողների յարաբերութիւնները աւելի սերտ եւ մտերիմ դարձնելու հարցը ներկայումս զբաղեցրել է հերթական Պետերբուրգի զինուորական-բժշկական ակադեմիայում։ Այդ հարցի քննութիւնը պէտք է պարզի, թէ ինչ եղանակով կարելի է բարձրացնել դասաւանդութիւնը եւ ուժեղացնել ուսանողների գործնական պարապմունքները։

—

Օդէսայում սկսվել է վերջին խառնակութիւնների ժամանակ ձերբակալված խռովարարների դատը։ Մինչեւ այժմ դատված մեղադրեալները՝ բոլորն էլ դատապարտված են վեց ամսվայ բանտարկութեան։

—

Ինչպէս յայտնի է, չինական պատերազմի պատճառով արգելվեց Ռուսաստանի ներքին նահանգներից գաղթականներին դէպի Սիբիր փոխադրելը, որովհետեւ հաղորդակցութեան ճանապարհները ծառայում էին զօրքերի եւ պատերազմական մթերքների փոխադրութեան համար։ Գաղթականների ամբողջ խմբեր այդպիսով մնացին ճանապարհին եւ հանգստութեան կայարաններում։ Լրագիրների ասելով, չատ մարդկանց մի տեղում խնվելու եւ բժշկական օգնութեան բացակայութեան շնորհիւ, գաղթականների շրջանում յայտնվել են վարակիչ հիւանդութիւններ։

—

«Правит. Вѣстникъ» լրագրում տված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին, որով յայտնվում է, որ այսուհետեւ միջնակարգ դպրոցների աշակերտներին այլ եւս չը պէտք է տրվեն աշխատանքներ ամառվայ արձակուրդի ընթացքում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ծպտեալ կերպով Կրիմ է եկել Եգիպտոսի խէդիվ Աբբաս-փաշան։

—

Ներկայ տարվայ սեպտեմբերի 1-ից սկսած՝ պետական բանկի եւ նրա բաժանմունքների միջոցով ուղարկվող գումարները, ֆինանսների մինիստրի կարգադրութեան համաձայն, կենթարկվեն վճարման նոր սակագների։ Այսպէս 500 ռուբլուց պակաս գումարներից կառնվեն 40-ական կոպէկ, հազար ռուբլուց աւելի գումարներից 25-ական կոպէկ իւրաքանչիւր հազարից եւ այլն։ Հեռագրով փոխանակագրեր անելու համար եւս, բացի հեռագրի վճարից,

---

գնալով մնծանում էր եւ նա իր վնասված թեւով չը կարողացաւ հետեւել միւսներին։ Նա կռուաց, աղաղակեց եւ ուրքան յուսահատութիւն կար այդ աղաղակի մէջ։ Սակայն առաջնորդը անտարբեր լողում էր առաջ եւ երամը հնազանդութեամբ հետեւում էր նրան... Նրա միջից լսելի եղան կարեկցութեան աղաղակներ, հրաժեշտի ողջոյն իրանց ընկերին, բայց եւ այնպէս ոչ ոք կանգ չառաւ. իսկ յոգնած կռունկը, դողդողուն թեւերը թափահարելով, հեռուից կամացուկ հետեւում էր երամին։ Այդ վայրկեանին իմ մէջ զարթնեց ծանր զգացմունք. ես համոզվեցի որ նա չէ տեսնելու սիրած երկիրը։

Ես, սիրելիս, նոյնպէս չեմ կարող հետեւել քեզ, թէեւ իմ հոգին շարունակ սլանում է դէպի հարաւ... դեպի իմ հայրենիքը, ուր ծընվեցին իմ մէջ գեղեցիկ մտածմունքներ, ուր ինձ այցելութեան էին գալիս մանկական անմեղ երազներ, ուր ես զգացի մայրական փաղաքշանքը եւ առաջին անարատ սէրը... Այնտեղ ամեն ինչ ինձ հարազատ է, այնտեղ նոճիների ստուերի տակ թողի ես իմ սրտին մօտ նուիրական գերեզմանները... Երբ տեսնես դուրս կապուտակը, այնպէս պայծառ ու անամպ ցերեկը եւ բիւրաւոր փայլփլուն աստղերով զարդարված խոր գիշերը, երբ տեսնես շաղղոն արեգակը, որի ճառագայթները կեանք եւ երջանկութիւն են պարգեւում մարդուն, երբ տեսնես դու նրա չքեղ ծիրանի մուգը եւ քնքոյշ—շողշող վարդագոյն ելքը, յիշիր, սիրելիս, քո պանդուխտ բարեկամին։

կարաններ չինել տալու համար։ Առ այժմ պատրաստել է տուած 40—45 մէկ եւ երկու սենեակներից բաղկացած բնակարանների մարգակ, որոնք պիտի կառուցվեն այդ հողաբաժիններից մէկ մասի վրա։ Ամբողջ շինութիւնը կը կառուցվի հանգուցեալ Գրիգոր Թումանեանի յիշատակին, որի ժառանգները նուիրել են 30,000 ռուբլի։

Թէ այս եւ թէ առհասարակ ամեն մի հասարակական գործունէութեան, լինի նա նեղ թէ ընդարձակ ծաւալով, ինչպէս է վերաբերվում տեղիս ինտելիգէնտների որոշ մասը, ինչ հայեացք է արտայայտում եւ իր եղկելի անպէտքութիւնը որպիսի պատճառաբանութիւններով է ուզում քօղարկել—այդ մասին մի ուրիշ անգամ։

Ն. Դաւթեան

ՈՂՋՈՑՆ ՀԱՑՐԵՆԻՔԻՆ

Աւրձակ բանաստեղծութիւն

(Թուսերէնից)

—

Տար, սիրելիս, տար ինձանից ողջոյն իմ հայրենիքին։

Ազատ, ինչպէս թռչունը, դու, գուշակելով մօտալուտ ձմեռը, թռչում ես դէպի հարաւ։ Ես յիշում եմ կռունկների երկար երամը, երբ երկնքի երեսով լողալով գնում էր իր առաջնորդի ետեւից, իսկ ես կանգնած ագահութեամբ դիտում էի նրա ուղին։ Ցանկարծ մի կռունկ դուրս եկաւ շարքից, յետ մնաց... Թռչողների եւ նրա մէջ եղած տարածութիւնը

սահմանվում է նոր սակագին։ 25 ռուբլուց պակաս գումարները ամենեւին չեն ընդունվի փոխադրելու համար։

—

ԿՕՋՈՐԻՑ մեզ գրում են. «Զարմանալի են մեր քահանաները. ինչքան ուզում ես ասա, գրի, նրանք էլի իրանց անկանոն ընթացքից ձեռք չեն վերցնի։ Մենք լսել ենք եւ տեսել, որ մեր եկեղեցու օրէնքով հայ հաւատացեալ քրիստոնեաների տները տարէնը երկու անգամ են օրհնում—Զրօրհնէքին եւ Զատկին, այն ինչ Կօջորի այս տարվայ հայոց քահանան չը գիտենք ինչ իրաւունքով, չուրջառն առած, զոնէ դուռն ընկած, օրհնում է Կօջոր ամարանոցի այն տները, ուր հայեր են բնակվում։ Ժողովուրդը տէր հօր այս վարմունքից զլված, ոմանք տուն ներս չեն թողնում եւ ոմանք էլ ծանր խօսքեր ասելով ճանապարհ են դնում։ Արդեօք ում պարտականութիւնն է այս տգեղ երեւոյթների վրա ուշադրութիւն դարձնել։ Միթէ ամեն մի քահանայ ինչ ուզենայ, կարող է անել»։

—

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Կարկուտը մասամբ վնասեց Շիրակի մի քանի գիւղերի հացերը, այն է, Փիրուալի, Տայնալիխ, Գօրխանա, Արազ-Օղլի, Բայրախտար եւ Փալտրվան։ Բայց առհասարակ այս տարի Շիրակում հացը նմանը չը տեսնված առատութիւն է խոստանում. խոտն էլ շատ առատ է ամեն տեղ»։

—

ԳԵՏԱԲԷԿ գիւղից (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Այստեղի բնակիչ Անդրէաս Գրիգորեանը մի այրի կնոջ աղջիկ է առել։ Այդ կինը այստեղ բոլորին էլ յայտնի էր իր հարստութեամբ։ Նա բնակվում է իր փեսայի տանը։ Սրանից մի տարի առաջ այդ կինը խելագարվում է, յայտնի չէ թէ ինչ պատճառից. բայց նրա խօսքերից երեւում է, որ իր փեսան—Անդրէաս Գրիգորեան—խլել է իր փողերը։ Ենթադրում են, թէ հէնց այդ է կնոջ խելագարվելու պատճառը. ասում են, որ 1500 ռուբլուց աւել է եղել փողը։ Այս բոլորը մի կողմ թողնենք։ Խելագարված կինը հիմա թափառում է իր հարեւանների դռների առաջ եւ ցոյց է տալիս անց ու դարձ անողներին իր մարմնի կապտած տեղերը։ Փեսան այն աստիճան անգութ է, որ ամեն օր ծեծում է իր զոքանչին։ Տողերիս գրողը մի քանի անգամ ականատես է եղել այդ զզուելի անգթութեանը։ Դեռ այս բռնութիւնները բաւական չեն, մի ժամ էր կանչել, որ նրան առողջացնի. մոլլան մի քանի օր գալիս էր եւ անգութ կերպով ծեծում խեղճ կնոջը, որ նա ասէ գժվացնող սատանաների տեղը. բայց խելագարը պատասխանում է, թէ գժվացնող սատանաներից մէկն ինքը, մոլլան է, միւսը՝ իր փեսան։ Հիմա մոլլան չը կայ եւ մոլլայի տեղը բռնում է իր փեսան, որ համարեա ամեն օր ծեծում է իր զոքանչին։ Ցանկալի էր, որ տեղական իշխանութիւնը ուշադրութիւն դարձներ»։

—

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Շիրակում գարին քաղել պրծել են, եւ շուտով կը վերջացնեն ցորենի քաղը։ Ահա մի շաբաթ է շարունակ անձրեւներ են տեղում եւ արգելք են դառնում գիւղացիների աշխատանքին. քաղած հացերը փչանում են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

«Դալցիէլի գործակալութեան հաղորդում են Շանգհայից, թէ Պեկինից յուլիսի 26-ին ստացված տեղեկութիւններին նայելով՝ պրինց Տուան եւ 100 ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաներ հեռացան Պեկինից։ Երբ տեղեկութիւն ստացվեց, թէ դաշնակից զօրքերը յուլիսի 23-ին յաղթեցին չինացիներին, շատերը սկսեցին փախչել մայրաքաղաքից, որոնց թւում եւ այրի կայսրուհին։ Իշանգ-ին-Խուանի գլխատումը, որ Չինաստանի ներկայացուցիչն էր Վիկտորիա թագուհու յօբելեանի ժամանակ, սարսափ է տարածել չինական ազգաբնակութեան վրա։ Ենթադրում են, որ Իւնլու, Պեչիլիի նախկին փոխարքան, սպանված է Եանձունի մօտ տեղի ունեցած կռուում։

«Բէյտէրի գործակալութեան» թղթակիցը օգոստոսի 1-ին հեռագրում է Վաշինգտոնից.

«Մի բարձրաստիճան պաշտօնեայ, այսօրվայ interview-ի ժամանակ, յայտնեց ինձ, թէ այն վարձատրութիւնը, որ Միացեալ Նահանգները պահանջում են չինացիների ձեռքով ամեն մի սպանված կամ ծանր վիրաւորված ամերիկացու համար, բաւական կը լինի ցմահ ապահով վիճակի մէջ դնելու նրանց ընտանիքի բոլոր անդամներին։ Միացեալ Նահանգների կառավարութիւնը ցանկութիւն չունի նոյն իսկ մի ոսնաչափ հող վերցնել վարձատրութեան փոխարէն, բայց եւ այնպէս կը պահանջէ հաստատուն գրաւական, որ իրերի այժմեան դրութեան նման դրութիւն այլ եւս տեղի չունենայ ապագայում։ Թէ ինչ գրաւական կը պահանջվի Չինաստանից—այժմ դժուար է ասել։ Դա կորոշվի յետոյ։ Այն բոլոր գործերում, որոնց մէջ որ եւ է դաղանութեան յանցանքը հնար կը լինի պարզել եւ ապացուցանել, թէ նա ընկնում է այս կամ այն ժամանաւոր անձի վրա, կը պահանջվի պատժի ենթարկել այդ անձին—բարձր թէ աննշան դիրք ունենայ յանցաւորը՝ այդ մի եւ նոյն է—եւ եթէ կարելի լինի ապացուցանել, որ թշնամական գործողութիւններ սկսելու հրամանը տուել են այրի կայսրուհին կամ կայսրը, նրանք կը զրկվեն գահից եւ նրանց փոխանակ կը նշանակվեն ուրիշ կառավարիչներ։ Իսկ եթէ ապացուցվի, որ բռնութիւնները կատարվել են պրինց Տուանի հրամանով՝ նա կենթարկվի ամենախիստ պատժի»։

Նոյն բանը հաստատում է եւ «Standard»-ի թղթակիցը.

«Միացեալ Նահանգների արտաքին գործերի մինիստրութեան մէջ բարձր դիրք ունեցող մի աստիճանաւոր—գրում է թղթակիցը—թոյլ տուեց ինձ յայտնելու ժամուլի մէջ, թէ Ամերիկան կը պահանջէ առատ վարձատրութիւն յօգուտ Չինաստանում վնասվածների ընտանիքների, եւ թէ նա այլ պահանջ չի անի Չինաստանից, բացի որոշ գրաւականներից ապագայի համար. իսկ իբրեւ գրաւական՝ Միացեալ Նահանգները ժամադրութիւն ունեն պահանջել, որ իրաւունք տրվի ամերիկական կառավարութեան զինուորական նաւեր պահել մի քանի նաւահանգիստներում եւ զօրք—մի քանի կէտերում։ Միացեալ Նահանգները այսպիսով կապահովեն իրանց շահերը. բայց որովհետեւ նրանք չեն գրաւի ոչ մի կտոր հող Չինաստանից, ուստի եւ չեն թոյլ տայ միւս պետութիւններին հակառակ կերպով վարվելու՝ հաժոզված լինելով, որ օտար պետութիւնների ձեռքն անցած ամեն մի նահանգ կորած է ամերիկական առեւտուրի համար։ Չինաստանը, իբրեւ ամբողջութիւն, պէտք է անձեռնմխելի մնայ»։

«Рус. Вѣд.» լրագիրը հետեւեալ դատողութիւններն է անում իրերի ներկայ դրութեան մասին Չինաստանում։

«Դեսպաններին ազատելով հազիւ թէ գործը վերջանայ։ Մի կողմից՝ յայտնի չէ, թէ ինչ են մտադիր ձեռնարկելու չինական նահանջող զօրքերը եւ ժայրաքաղաքից հեռացող չինական իշխանութիւնները. միւս կողմից՝ նոյնպէս յայտնի չէ, թէ ինչ է ենթադրվում անել միացած զօրքերի կողմից։ Արդեօք ի նկատի ունեն նրանք ամրանալ Պեկինում եւ սպասել հետեւանքներին, թէ գնալ առաջ՝ նահանջող թշնամու դէմ, թէ, վերջապէս, վերադառնալ դէպի Տեանձին։ Ցաւենայն դէպս, դեսպանների ազատութեամբ վերջացաւ միայն սկսված պատերազմի առաջին գործողութիւնը, իսկ վերջը, նայելով պետութիւնների զինուորական շտապ պատրաստութիւններին, հազիւ թէ մօտիկ լինի»։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Մարսէլ, օգոստոսի 12-ին

Ֆրանսիայի առաջին նաւահանգիստը տօնական կերպարանք է ստացել. ամեն կողմից խմբերով մարդիկ Մարսէլ են դիմում, ընդհանուր ուրախութեանը մասնակից լինելու համար։ Ծովի ափում կարմիր թաւշից վրան է պատրաստված, իսկ վրանի տակ մի քանի թաւշեայ բազկաթոռներ։ Ի՞նչ է այս անսպասելի պատրաստութիւնների շարժառիթը։—Ծայրագոյն Արեւելք ուղեւորվող զինուորներին աւելի շուքով ճանապարհ դնել։

Ցանկարծ հեռագիրը հաղորդեց, որ հանրապետութեան նախագահը Մարսէլ պիտի գայ, ուղեկցութեամբ ներքին, զինուորական եւ ծովային մինիստրների, որ անձամբ յանձնէ դէպի Ծայրագոյն Արեւելք ուղեւորվող բանակին նոր դրօշակները։ Կիրակի, ժամի 9½-ին, նշանակված էր նախագահի գալուստը. 9-ից 10 րոպէ անց՝ թնդանօթի որոտումը յայտնեց նախագահի գնացքի Մարսէլ մտնելը. 20 րոպէից յետոյ նախագահը ծովի ափը հասաւ՝ ուղեկցութեամբ յիշեալ մինիստրների, բազմաթիւ սենատորների, պատգամաւորների, գեներալների եւ դափնիների ու մրտենիների շարքերը։ Մաքր լիբանանեան մայրի տակ, որի ճիւղերը, որպէս նահապետի օրհնող ձեռքերը, տարածված են չորս կողմը, ու զսպելով ոտերիդ աղմուկը, մտիր կամացուկ նոճիների ծառուղին եւ կանգառ... Այնտեղ թագաւորում է յաւիտենական խորհրդաւոր լռութիւն. կարծես, այդ վայրկեանին կարդացվում է մի սրբազան աղօթք։ Կը տեսնես, թէ որչափ գեղեցիկ են գորշ կանաչագոյն նոճիները երկնակամարի եւ ծովի բաց—կապուտակ ֆօնի վրա—սրածայր, ամուր, հաստատուն, որպէս մետաղիձուլուածքը... Ո՞րքան գեղեցիկ են նրանք տխուր, անշարժ լուսնկայ գիշերին... Եւ սիրում եմ այդ բոլորը... Աւաղ, ինչու այժմ ես չեմ կարողանում տեսնել նրանց։ Դու, բազդաւոր, կանգ կառնես յուզված, ընկճված, եւ երբ քո առաջ կը բացվի կապուտակ ծովի անծայր մակերեւոյթը՝ կանգնիր նրա ափին, մի ձգիր շուտով նրան, նա զանազանակերպ է, փոփոխական եւ խորունկ, ինչպէս մարդու հոգին... Նրա հեռանկարը դէպի իրան է ձգում ամենքին։ Նա գուրգուրում է, հմայում, երգում է դիւթիչ երգեր եւ խոնջութիւն բերում վճիտ ջրերի մեղմիկ ծփանքով. պառկիր նրա ափին. այնտեղ հեռաւոր Ասիայից ծովը կը քշէ դէպի քեզ իր մեղմ ալիքները՝ խփվելով ժայռոտ ափերին, օրօրելով մակոյկները եւ առագաստաւոր նաւերը... Եւ երբ նա կատաղած իր անտակ խորքից դուրս կը շպրտէ հրակայ կոհակներ, երբ սպիտակ փրփուրից լեռներ կազմելով, նա կը մռնչայ, կոռնայ, երբ նա հպարտ ու յուզված՝ փայլուն ցայտերը կը շպրտէ մինչեւ սեպսպան ժայռերի կատարները՝ քո հոգին կը բռնվի յափշտակութեամբ եւ դու կը խոնարհվես նրա գեղեցկութեան, նրա վեհութեան առաջ։ Գոռոզ վեհանձնութեամբ լի ծովը անպայման գեղեցիկ կերեւայ քեզ։ Այդ վայրկեանին նա, դարաւոր ծփող այդ ծովը, կը տայ պատասխան քո տանջող, ցաւոտ սրտի բոլոր հարցերին...

Օ՜ ծով, հարազատ, անմոռաց, հրաշալի ծով. կը գամ ես արդեօք երբ եւ իցէ քո ափերը կրկին...

Տար, սիրելիս, տար իմ ողջոյնը հայրենիքիս։ Եւ ասա, որ ակամայ օտարութեան ձիգ տարիները չեն ջնջել իմ յիշողութիւնից նրա գեղեցիկ տեսքի եւ ոչ մի գիծը, ասա—ես իմ սրտիս մէջ պահում եմ նրա անունը, որպէս սրբութիւն եւ տանջվում եմ... Տանջվում եմ, որպէս կալանաւորը հեռու հիւսիսում, եւ մաշված, ընկճված, դառն վշտերի մէջ. թէեւ կորցրել եմ հաւատս դէպի լաւ ապագան, բայց կրծքիս տակ դեռ կրում եմ երբ եւ իցէ հայրենիքս տեսնելու մի ցնորք, մի տենչանք...

Ասա, սիրելիս, իմ ժպտուն հայրենիքին, որ աշնանային եւ ձմերային տխուր օրերին՝ նրատած միայնակ մութ լուսամուտի առաջ, որտեղից թափվում են, որպէս արտասուք, անձրեւի անվերջ կաթիլները, ես լսում եմ քամու ողբը, ոռնոցը եւ կարօտի տանջանքով յիշում եմ տաք ու պայծառ արեգակը եւ կապուտակ ծովը։

Ց. Տէր-Մարտիրոսեան

Երեւան.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Paris-Nouvelles» գործակալութիւնը հաղորդում է. «Պարսից Շահը Բարիզէն մեկնելով, երեկ չէ առջի երեկոյ Օսթանտ հասեր է, ուր մեծ պատրաստութիւններ տեսնվեր են զինքը ընդունելու։ Մասնաւոր կառախումբ մը պելքիացի պաշտօնական անձնաւորութիւնները սահմանագլուխ տարեր էր վեհապետն ընդունելու. ներկայ էր նաեւ Պարսից դեսպան Ճէվատ-խանը իր հետեւորդներով։ Շոգեկառքը Պրիւքսէլ հասեր է ժամի 3-ը 20 անցած։ Շահը կայարանին մէջ մի քիչ հանդստացեր է, ուր երկու մանկիկներ իրեն ծաղիկ են նուիրեր։ Մասնաւոր հանդիսութիւններ կատարված են դամբարաստիճան անձնաւորութիւնների։ Ծովի ափում խմբված էր ուղեւորվող բանակը իր հրամանատարներով։ Շքանշաններ բաժանելուց յետոյ, երբ կարգը դրօշակներին հասաւ, նախագահ Լուբէ դարձաւ բանակի հրամանատար գեներալ Վոյռոնին հետեւեալ ճառով.

Գեներալ՝

«Հանրապետութեան անունից յանձնում եմ ձեզ ուղեւորվող բանակի դրօշակները։ Նրանք յանձնվում են ձեր ազնուութեանը եւ հայրենասիրութեանը, որի մասին ես վստահ եմ։ «Փառք եւ հայրենիք»—այդ է նրանց նշանաբանը։

«Շուտով դուք կը նշանակէք նրանց ծալքերի վրա մի արշաւանքի անուն, որ անհրաժեշտ էր դարձել շնորհիւ մեր իրաւունքների բընաբագման, մեր արդարացի շահերի ոտնակոխ լինելուն, եւ այն բիրտ յարձակման, որին ենթարկվեց Չինաստանում ամեն ինչ, որ վերաբերում է լուսաւորութեան եւ առաջադիմութեան»։

Նոյնպիսի ոգեւորիչ խօսքերով Լուբէ դիմեց օֆիցէրներին ու զինուորներին։

Երկար ծափահարութիւնները յաջորդեցին նախագահի ճառին, օդը թնդաց «կեցցեն զինուորները», «կեցցէ Ֆրանսիան», «կեցցէ Լուբէ» աղաղակներից։ Ժամի 10½-ին հանդէսը վերջացաւ. նախագահը մինիստրների եւ բարձրաստիճան անձանց հետ դիմեց նոյն հանդէսով եւ զինուորական շքով պրէֆէկտուրա, ուր ճաշից յետոյ եղաւ պաշտօնական անձանց ընդունելութիւն։ Նոյն օրը, ժամի 4-½, Լուբէ Պարիզ ուղեւորվեց։

Հանրապետութեան նախագահի մեկնելուն պէս, ժողովուրդը խմբերով դիմեց ծովի ափը, նաւահանգիստը, նաւահանգստի դիմացի պարտէզը, նոյն իսկ շրջակայ կղզիները, որտեղից պիտի մեկնէին երկու չոգենաւ զինուորներով։ Քսան հազարից աւելի ժողովուրդ է խմբված. ընդարձակ նաւահանգստի պատերը սեւացած են բազմութիւնից, ծովը ծածկված է բազմաթիւ նաւակներով եւ փոքրիկ չոգենաւերով։ Ժողովուրդը զինուորների ձեռքը սեղմում է, ծաղկի փնջեր շնորհում, սիգարներ յանձնում։ Ոմանք համբուրվում են իրանց եղբայրների հետ, կինը՝ ամուսնու հետ։ Ամենքի երեսի վրա ուրախալի ժպիտ է նկատվում։ Ֆրանսուհին լալկան չէ. նա իր ամուսնուն պատերազմի է ուղարկում այնպէս, ինչպէս մի ժամանակ սպարտուհիները...

Ց. Այվազեանց

Իրանի վեհապետին ամբողջ ճանապարհորդութեան ժամանակ, մինչեւ Օսթանտ։ Ամբողջ քաղաքը ուրախութեան մէջ է թագաւորական հիւրին գալուն համար եւ շատ համակրութիւն կը ցուցնէ դէպի Մուզաֆֆէր Էդդին»։

—Գերմանական կառավարութիւնը սարսված կը մնայ, երեւի, չուտով բէյլիստագ գումարել։ Քանի որ պատերազմ չէ յայտարարված Չինաստանին, կառավարութիւնը, առանց բէյլիստագի թոյլտուութեան, կարող է ծախսել չինական արշաւանքի համար պատերազմական մինիստրութեան տրամադրութեան տակ դնված 150,000,000 մարկ գումարը միայն, որից արդէն 90,000,000-ը ծախսված է։ Սակայն հաւանական է, որ դեռ շատ միլիոններ պէտք դան այդ արշաւանքի համար։ Այդ նոր միլիոնները ծախսելու լիազորութիւն միայն բէյլիստագը կարող է տալ։

—Պարիզի ցուցահանդէսի այն յանձնաժողովը, որ քննում էր ի ցոյց դրված առարկաներն եւ նշանակում պարգեւներ, վերջացրեց իր պարապմունքը։ Ցանձնաժողովը գործում էր Լէօն Բուրժուայի նախագահութեամբ։ Ի ցոյց դրված առարկաների ընդհանուր թիւը, որոնց մասին պէտք է վճիռ կայանար, հասնում էր 75,531-ի։ Նշանակված են 42,790 պարգեւներ, որոնցից ամենարարձրները—2,827, ոսկեայ մեդալներ—8,166, արծաթեայ մեդալներ—12,244, բրոնզի մեդալներ—11,615 եւ գովասանական թերթեր—7,938։

—«Standard» լրագրի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, թէ, Կ. Պոլսից ստացված տեղեկութիւններին նայելով, սուլթանը հրամայել է անյապաղ միջոցներ ձեռք առնել՝ հեռագրական անվիջական հաղորդակցութիւն հաստատելու Թիւրքիայի եւ Հնդկաստանի մէջ։ Առաջ հաղորդակցութիւնը կատարվում էր Ֆաոյի, Պարսից ծոցի հիւսիսային ափերի վրայով, բայց այդ գիծը դժուար էր պահպանել, ուստի եւ հեռագիրները ուղարկվում էին Պարսկաստանից անցնող անգլիական եւ ռուսական հեռագրաթելերով։ Նոր նախագծով՝ հեռագրաթել պէտք անցկացնվի Ֆաոյից մինչեւ Բաղդադ, որտեղից Կ. Պոլիս կը գնան երկու թել, մէկը Հալէպի, իսկ միւսը Դիարբէքիրի վրայով։ Ի նկատ առնելով սուլթանի հափշտակական ծգտումները, Հնդկաստանի եւ Թիւրքիայի մէջ հեռագրական ուղղակի հաղորդակցութիւն հաստատելուն ծուռ աչքով են նայում Անգլիայում։

—Մօտ օրերումս Զերնօգորիայի իշխան Նիկոլայ Նեգոշ-Պետրովիչ ոտնեց իր կառավարութեան 40-ամեակը։ Նա դահ է բարձրացել 1860-ի օգոստոսի 1-ին, իշխան Դանիէլի մահվանից յետոյ, որ սպանվեց Կատարոյում։ Նիկոլայը Դանիէլի եղբօր որդին էր եւ որդեգրված էր նրանից ու հրատարակված ժառանգ Զերնօգորիական դահի։ Իշխան Նիկոլայ աւարտել է իր ուսման ընթացքը Պարիզում, Լիւզուվիկոս մեծի լիցէօնում, եւ իր 40-ամեայ կառավարութեան առաջին կիսում՝ էական բարենորոգումներ է մտցրել վարչութեան բոլոր ճիւղերում։ Զերնօգորիական օրէնսդրութեան կարգաւորումը արդարացի կերպով համարվում է նրա մեծ ծառայութիւններից մէկը, որ նա ցոյց է տուել իր հայրենիքին։ Զերնօգորցուն յատուկ զինուորական ոգու հետ ունենալով նաեւ դիւանագիտական շնորհք, իշխան Նիկոլայ միշտ կարողանում էր պատուով դուրս գալ այն դժուարութիւններից, որոնց մէջ գտնվում էր Զերնօգորիան մանաւանդ 1876—77-ի ռուս-թիւրքական պատերազմից առաջ։ Բերլինի կոնգրէսում Զերնօգորիան մեծ աջողութիւն ունեցաւ. կոնգրէսը աւելացրեց երկրի տարածութիւնը եւ երեք տուեց նրան դէպի ծովը։ Իշխան Նիկոլայ ունի երեք որդի եւ վեց աղջիկ. նրա ընտանիքը այժմ բարեկամական կապերով կապված է Եւրոպայի մի քանի արքունիքների հետ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

9 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ։ «Սեւ դրօշակների» պատ Լանի 3500 մարդով գնում է Պեկինի վրա։ Ամբողջ ճանապարհին կպցրած են սպառնալից աֆիշներ։ Զինուորները եւ բնիկները ոչնչացնում են քարոզիչների գոյքը։

ՇԱՆԳՀԱՅ։ Լրագրական տեղեկութիւններով՝ երբ դաշնակից զօրքերը մտան Պեկինի արտաքին մասը, տեղի ունեցաւ կատաղի կռիւ։ Ապա դաշնակիցները պատառուածք բացին քաղաքի սրբազան մասի պարսպի մէջ եւ գրաւեցին նրան։ 4000 չինացի քրիստոնեաներ նշանաւոր օգնութիւն մատուցին դաշնակիցներին՝ շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք լաւ ծանօթ են քաղաքին։ Այժմ դաշնակիցների դրօշակները ծածանում են կայսերական պալատի վրա։ Փողոցներում կռիւը շարունակվում է. չինացիները դեռ եւս շարունակում են յամառ դիմադրութիւն ցոյց տալ։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական ծովապետը հաղորդում է, թէ չինական զօրքերը սպառնում են Եանճունին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօտասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Ռաբաեսանանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօտասեվիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդ անոցի վերատեսուչ՝
Ռժեկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Ներսիսեան հոգեւոր դպրոցի վարչութիւնը սրանով յայտարարում է, որ նորեկ աշակերտների քննութիւնները սկսվելու են օգոստոսի 30-ին։ Նորեկ աշակերտները պարտաւոր են ներկայացնել ծննդեան վկայական (իսկական եւ ոչ քաղուածք) եւ ծաղկի պատուաստման վկայական։ Առանց վկայականների նորեկ աշակերտները քննութեան չեն ենթարկվի։

3—3 Տեսուչ՝ Ս. Բալաղեան

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

հայ հասարակութեան, որ Սալմասում նոր բացուող դպրոցարանին աջակցութիւն ցոյց տայ, գրքեր նուիրելով։

Նուիրած գրքերը կարելի է ուղարկել այս հասցէով. Бебутовская ул. д. Манденова. Степану Вартанянцу. 2—3

Թեհրանի հայոց ս սումնարանի համար հարկաւոր է

ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ

24 դասով հայերէնից, թուաբանութիւնից եւ ուրիշ առարկաներից եւ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ.

երկուսի ռոճիկը տարեկան 500 թուման (մօտ 1000 ր.)։ 3—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԲԱԳԻՈՒՄ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայոց գիմնազիայի, բէալական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար։

Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէբելեան սիստեմով։ Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսագիշերօթիկ երեխաներ։ Մանկական պարտէզի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կարելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բաղում։ 5—8

КАПИЛЛЕРИНЪ
НОВОЕ СОВЕРШЕННО БЕЗВРЕДНОЕ СРЕДСТВО
ВОЗВРАЩАЕТЪ СѢДЫМЪ ВОЛОСАМЪ
ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ
ЦѢНА 2 РУБ.
А. СІУ и К°
М 109.538

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

Երկու Ուսուցիչներ

որոնցից ամեն մէկը պէտք է դասաւանդէ երկու ուսումնարանում կրօն եւ հայոց լեզու։ Մէկը ժող. լուս. մինիստր. միդասեան եւ երկդասեան ուսումնարանում կունենայ շաբաթական 30 դաս 700 ր. ռոճիկով, իսկ միւսը—24 դաս երկու միդասեան դպրոցներում՝ 550 ր. ռոճիկով։ Բացի ռոճիկից ուսուցիչները ոչինչ չեն ստանայ։ Պահանջվում է կարեւոր ցէնզ։ Ցանկացողները պէտք է խնդիր ուղարկեն իրանց դպրոցների կամ նրանց վաւերացրած պատճէնների հետ այս հասցէով՝ Городскому Старостѣ города Св. Креста Ставропольской губерніи. 3—3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբրայերեն, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱԳՄՈՒՆԳԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1900 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները կիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ 16—30

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ
20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
ЖЖЕНЫЙ КОФЕ
ПРОДАЖА ВЕЗДѢ С. СІУ и К°
6—26 (Г)

Կենտրոնական գրավաճառանոցում ծախվում են

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

ԱՑՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . . 60 կ.
ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ
ՄԵԶԱՆՈՒՄ . . . . . 20 կ.

ՀԱՅՈՒՍՈՒՑԻՉ

Ուզում է պաշտօն. աւանդում է հայոց լեզու եւ հայկական ձայնագրութիւն։ Դիմել Аккерманъ. Учителю Арутюну Ордуянцу. 3—3



ԱՄԵՆԱՅԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д Т. Д. З. Банка.
14—20

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 5) Торговыя и вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 12—20

За успѣшныя занятія благодарности.

Преподав. ведется по собств. сочиненіямъ.

Годъ занятій одиннадцатый.

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Августа 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.